

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ 2018

Ա. Կիրակի Յիսնակի / ԹԻԻ 86

Dimanche 25 novembre 2018

1er Dimanche de l'Avent / NO. 86



Today's Bible Readings

1 Thessalonians 1:1-10 / Luke 12:13-31 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

1 Thessaloniens 1: 1-10 | Luc 12: 13-31 |

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆ / Յոզեֆ Բոլի
Քարոզիչ՝ ԱՐԺ. Տ. ՏՐԴԱՏ ԲՅՆՅ. ԹԱՇԾԵԱՆ**

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN/ Prêtre Paroissial

Le sermon sera prononcé par : Rév. PÈRE DERTAD TASHDJIAN

Office Matines à 9 :30 - Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

Office de Requiem à Midi - Յոգեհանգստեան Պաշտօն կ'Էսօրին

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan, Dn. Kami Sarimanukoglu, Dn. Zaven Der Sahagian
Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan

Choirmaster: Mr. Sarkis Barsemian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS



1 ԹԵՍԱԳՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ 1.1-10

1Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսով:

2Հնորիք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, **3**անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, **4**գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: **5**Որովհետեւ մեր աւետարանը քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ գորութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, **6**եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին ուրախութեամբ: **7**Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ են, **8**որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու: **9**Քանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, **10**եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ'ազատէ մեզ գալիք բարկութենէն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12.13-31

13Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապէ՛տ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: **14**Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՛վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: **15**Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք եւ զգուշացէ՛ք ազահութենէ. որովհետեւ մեկուն

ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: **16**Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Յարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, **17**եւ ան կը մտածեր ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ ըսաւ. **18**“Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, **19**եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչե՛, կե՛ր, խմե՛ եւ զուարճացի՛ր»»: **20**Բայց Աստուած ըսաւ անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ”: **21**Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

22Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. **23**որովհետեւ անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: **24**Գիտեցէ՛ք ազբանները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ աւելի կ’արժէք թռչուններէն: **25**Ձեզմէ ո՛վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը աւելցնել հասակին վրայ: **26**Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: **27**Գիտեցէ՛ք շուշանները, թէ ի՛նչպէս կ’աճին: Ո՛չ կ’աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: **28**Ուստի եթէ խտրը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատներ: **29**Ա՛լ դուք մի՛ փնտռէք թէ ի՛նչ պիտի ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. **30**որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: **31**Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի”»:

1 Thessalonians 1.1-10

1 Paul, and Silvanus, and Timotheus, unto the church of the Thessalonians which is in God the Father and in the Lord Jesus Christ: Grace be unto you, and peace, from God our Father, and the Lord Jesus Christ. **2** We give thanks to God always for you all, making mention of you in our prayers; **3** Remembering without ceasing your work of faith, and labour of love, and patience of hope in our Lord Jesus Christ, in the sight of God and our Father; **4** Knowing, brethren beloved, your election of God. **5** For our gospel came not unto you in word only, but also in power, and in the Holy Ghost, and in much assurance; as ye know what manner of men we were among you for your sake. **6** And ye became followers of us, and of the Lord, having received the word in much affliction, with joy of the Holy Ghost. **7** So that ye were ensamples to all that believe in Macedonia and Achaia. **8** For from you sounded out the word of the Lord not only in Macedonia and Achaia, but also in every place your faith to God-ward

is spread abroad; so that we need not to speak any thing. ⁹ For they themselves shew of us what manner of entering in we had unto you, and how ye turned to God from idols to serve the living and true God; ¹⁰ And to wait for his Son from heaven, whom he raised from the dead, even Jesus, which delivered us from the wrath to come.

Luke 12.13-31

¹³ And one of the company said unto him, Master, speak to my brother, that he divide the inheritance with me. ¹⁴ And he said unto him, Man, who made me a judge or a divider over you? ¹⁵ And he said unto them, Take heed, and beware of covetousness: for a man's life consisteth not in the abundance of the things which he possesseth. ¹⁶ And he spake a parable unto them, saying, The ground of a certain rich man brought forth plentifully: ¹⁷ And he thought within himself, saying, What shall I do, because I have no room where to bestow my fruits? ¹⁸ And he said, This will I do: I will pull down my barns, and build greater; and there will I bestow all my fruits and my goods. ¹⁹ And I will say to my soul, Soul, thou hast much goods laid up for many years; take thine ease, eat, drink, and be merry. ²⁰ But God said unto him, Thou fool, this night thy soul shall be required of thee: then whose shall those things be, which thou hast provided? ²¹ So is he that layeth up treasure for himself, and is not rich toward God. ²² And he said unto his disciples, Therefore I say unto you, Take no thought for your life, what ye shall eat; neither for the body, what ye shall put on. ²³ The life is more than meat, and the body is more than raiment. ²⁴ Consider the ravens: for they neither sow nor reap; which neither have storehouse nor barn; and God feedeth them: how much more are ye better than the fowls? ²⁵ And which of you with taking thought can add to his stature one cubit? ²⁶ If ye then be not able to do that thing which is least, why take ye thought for the rest? ²⁷ Consider the lilies how they grow: they toil not, they spin not; and yet I say unto you, that Solomon in all his glory was not arrayed like one of these. ²⁸ If then God so clothe the grass, which is to day in the field, and to morrow is cast into the oven; how much more will he clothe you, O ye of little faith? ²⁹ And seek not ye what ye shall eat, or what ye shall drink, neither be ye of doubtful mind. ³⁰ For all these things do the nations of the world seek after: and your Father knoweth that ye have need of these things. ³¹ But rather seek ye the kingdom of God; and all these things shall be added unto you.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ,
Ամէն

«Մեծահարուստի մը արտերը առատ բերք տուին. եւ ան խորհեցաւ ու ըսաւ. «Տեսնեմ ինչ կրնամ ընել, քանի որ բերքս կուտակելու տեղ չկայ: Գիտեմ, թէ ինչ պետք է ընեմ. կը քանդեմ իմ շտեմարաններս եւ աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ կը հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ բարիքներս. եւ ես ինծի կ'ըսեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիներու համար ամբարուած բազում բարիքներ ունիս, հանգի՛ստ ըրէ, կե՛ր, խմե՛ եւ ուրա՛խ եղիր»: Աստուած անոր ըսաւ. «Անմի՛տ, ճիշդ այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի, իսկ ինչ որ պատրաստած ես, ո՛րուն պիտի ըլլայ»: Նոյնպէս է նաեւ ան, որ իր անձին համար գանձ կը հաւաքէ եւ Աստուծմով չհարստանար»:

(Ղուկաս 12: 16-21)




Աստուածասէր քոյրեր եւ եղբայրներ, այս առակին միջոցով, որ կը հանդիսանայ օրուան հոգեւոր սնունդը, Տէրը կը նախազգուշացնէ մեզ ընչաքաղցութեան արատէն, այսինքն՝ այս աշխարհի բարիքները վայելելու համար ունեցուածք ձեռք բերելու կիրքէն: Մարդու կեանքը, անոր բարեկեցութիւնը կամ երջանկութիւնը կախուած չեն անոր ունեցուածքի շատ ըլլալէն: Բայց անմիտ հարուստը, գալիք կեանքի մասին նուազագոյն մտահոգութիւն չունենալով կը մտածէ միայն թէ ինչպէս օգտագործէ սեփական հարստութիւնը՝ ներկայ կեանքը վայելելու համար: Ան մտադիր չէ նոյնիսկ ոչ Աստուծոյ եւ ոչ ալ հոգիի մասին խորհելու, այլ՝ անոր տենչն է միայն անասնական, զգացական հաճոյքները. «Հանգիստ ըրէ, կեր, խմէ եւ ուրախ եղիր»: Դիտելով այս մարդուն, որ մտադրած է իր հարստութիւնը պահպանել, կարծես անոր անբաժան մասը ըլլար, Քրիստոս կ'ըսէ. «Անմիտ, ճիշդ այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի», ապա ի՞նչ կրնաս ընել...

Յարգելի հաւատաւորներ՝ բոլորիս, թիկունքին կանգնած է մահը, որուն մասին ամէն քայլափոխին մեզ կը յիշեցնէ Աւետարանը, բայց ոչ թէ անոր համար, որ մահուամբ վախցնէ, այլ՝ որպէսզի կեանքին հաղորդէ նոր՝ այլ ճանապարհով ամենեւին անհասանելի խորութիւն: Մենք կ'ապրինք շատ մակերեսային կեանքով. մենք կ'ապրինք բազմաթիւ նիւթերով, որոնք չափազանց մանր են, որպէսզի այդ մանրութեամբ գոհանայ մարդուն սիրտն ու հոգին: Ինչքա՛ն սին, աննպատակ, անպտուղ խոհեր կ'ունենանք մէկ օրուան ընթացքին. որքա՛ն զգացումներ յաջորդած են մէկը միւսին ետեւէն՝ ոչ մէկ

խոր հետք թողելով, այլ այնպես՝ զուր, ինչպես ամպերը կ'անցնին երկինքով:
Իսկ մահը զարմանալիօրեն այնքա՛ն մօտ է, որ ամեն ինչ կրնայ իր տեղը դնել:

Յատկապես այն պատճառով, որ մօտալուտ մահը, կեանքը նոյնքան
անգնահատելի կը դարձնէ: Ոչ այն իմաստով, որ անհրաժեշտ է պայքարիլ, որ
չմեռնինք, այլ այն իմաստով, որ իր ամբողջ բովանդակութիւնը կրնայ դառնալ
այնպես խորունկ, ինչպիսին միայն մահը կրնայ
անոր դարձնել: Ամեն արտասանուած խօսքը
կրնայ ըլլալ վերջինը. մի՞ թէ այն պետք է ըլլայ
դատարկ, աննշան կամ թէ աւելին վատ՝
ջղային, դառն, չար, աւերիչ: Ամեն արարք կրնայ
վերջինը ըլլալ, ինչո՞ւ այն չըլլայ մարդկային
յարաբերութիւններուն մէջ եղած ամենախոր
եւ սքանչելի արտայայտութիւնը, իրագործումը:
Մենք սա կը մոռնանք, քանի որ մեզ կը թուի, թէ
առջեւնիս այնքան ժամանակ կայ, որ կը
կարողանանք ուղղել սխալները, բուժել հոգիի
վերքերը, որ միսիթարենք մարդուն: Սակայն
կրնայ ուշ ըլլալ. կրնայ մահանալ մեզմէ ոեւէ
մէկը... Արդէն ուշ կ'ըլլայ միսիթարել, փաղաքշել,
ուրախացնել, ուշ կ'ըլլայ վերջին անգամ
երջանկացնել մարդուն այս երկրին վրայ...



Մահը մեր աչքերուն առջեւ դրուած է
Աւետարանին կողմէ, Քրիստոսին կողմէ, մեր կեանքով իսկ՝ ոչ թէ անոր
համար, որ մեզ զարհուրեցնէ, այլ՝ որպէսզի մենք ապրինք խորունկ՝ մեր
մարդկային նրբագգաց սրտի խորութեան եւ մեծ, խորիմաց մտքի
համապատասխան: Ուստի մեր սրտի ու մտքի՝ մեր կեանքի, գանձարանին
մէջ կուտակենք ոչինչ, ինչ որ չափազանց չնչին է, որմէ մենք ալ փոքրոգի կը
դառնանք: Երկրաւոր գանձեր կուտակելու փոխարէն, մեզի անհրաժեշտ է
հարստանալ Աստուծով, այսինքն՝ հոգալ յաւիտենական, անապական
հարստութեան՝ առաքինութիւններու ձեռք բերմամբ, եւ այդ կարելի է ձեռք
բերել՝ երկրաւոր հարստութիւնը օգտագործելով, օգտագործելով ոչ թէ
մարմնի ստոր ու չնչին հաճոյքներուն, այլ ամեն տեսակ բարի եւ
յաւիտենականութիւն պարգեւող գործերու համար, այժմ եւ միշտ եւ
յաւիտենաս յաւիտենից, ամեն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Սարգարեան

Յոգեւոր հովիւ

Résumé du Sermon

"Gardez-vous de toute âpreté au gain, car la vie d'un homme ne dépend pas de ses richesses" (Luc 12,16-21)

Jésus invite ses disciples à faire preuve de maturité, donnant l'exemple d'un homme riche qui est bien tranquille car il a placé ses biens en sécurité et vivra une vie paisible.

L'homme est la seule créature qui sait qu'elle va mourir, et l'homme sage est celui qui a un projet pour la vie après la vie qui est la plus longue et sans fin.

S'enrichir en Dieu c'est de vivre en suivant les commandements de Jésus, adorant son

Père et aimant son prochain. Plus nous serons riches pour l'amour de Jésus plus nous aurons l'assurance pour le Salut et la vie éternelle.

Bref s'enrichir pour Dieu c'est s'appauvrir pour lui car à l'heure de notre mort le Seigneur sera notre seule richesse.

En Foi et en Prière

Père David Margaryan
Prêtre paroissial





ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔ



**Քու անհուն ինամքովդ՝ դուն հոգա իմ
հոգեւոր ու մարմնաւոր պետքերս,
եւ այնպէս ըրէ՝ որ ամէն բանի մէջ քեզի յուսամ եւ
ապաւինիմ: Թոյլ տուր որ միշտ շնորհակալութիւն
յայտնեմ ինծի տրուած բոլոր պարգեւներուդ համար,
եւ գոհունակ սրտով բաւարարուիմ իմ վիճակովս ու
պայմաններովս:**

**Յեռո՛ւ պահէ զիս ծուլութենէ եւ պարապութենէ:
Փրկէ՛ զիս չար ընկերներէ, չար օրինակներէ,
եւ բոլոր վտանգներէն ու փորձութիւններէն:
Եւ ընդունէ՛ հօրս եւ մօրս, եղբայրներուս եւ քոյրերուս,
ամբողջ ընտանիքիս եւ բարեկամներուս,
ինչպէս նաեւ բոլոր մարդոց ալ յիշէ՛ քու սիրոյդ մէջ,
եւ բոլորին ալ առատօրէն տո՛ւր քու բարի
պարգեւներդ,
թէ՛ հոս եւ թէ՛ յաւիտենական կեանքի մէջ:
Որովհետեւ քո՛ւկդ են փառքը, պատիւն
ու զօրութիւնը յաւիտեանս յաւիտենից. Ամէն:**





PRIÈRE DES JEUNES GENS



Avec amour infini, prends soin de mes besoins

**spirituels et charnels et ainsi,
fais en sorte, qu'en toute circonstance je
t'espère et mette ma confiance en toi.**

**Accorde-moi de te rendre gloire pour tous les dons
que tu m'as donné et d'être reconnaissant pour ma situation
et mes conditions de vie.**

Eloignes-moi de la paresse et d'oisiveté.

**Sauves-moi des mauvais amis, des mauvais exemples,
de toutes les tentations et dangers.**

**Reçois ma prière pour mes parents, mes sœurs, mes frères,
toute ma famille ainsi que tous les hommes.**

**Dans ton amour, souviens-toi d'eux
et donne leur en abondance tous tes dons,
non seulement ici bas, mais aussi dans la ville éternelle,
car c'est à toi qu'appartiennent la gloire
et la puissance pour l'éternité de l'éternité. Amen.**





Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Fête de l'église pour la Semaine Prochaine

Նոյեմբեր – Novembre

26, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Կուսանացն
Յուլիանեայ եւ Վասիլուհիոյ:

Lundi 26 – Fête des Stes vierges Julianna et Basilea.

27, Երեքշաբթի – Տօն Սրբոցն Ղուկիանոսի քահանային,
Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի:
Ոսեսիմեայ եւ այլոց աշակերտացն Պօղոսի:

**Mardi 27 - Fête du Saint prêtre Lucien, de Darakros, Probos,
Andronicos, Onésime
et les autres disciples de Saint Paul.**

28, Չորեքշաբթի – Պահք:
Mercredi 28 - Jeûne.

29, Հինգշաբթի – Տօն Սրբոցն Առաքելոցն
եւ առաջին Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին:
**Jeudi 29 – Fête du Saint patriarche Clément
et de l'évêque Bagrad de Doromane.**

30, Ուրբաթ - Պահք:
Vendredi 30 - Jeûne.

Դեկտեմբեր / Décembre

1, Շաբաթ – Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն
մերոց՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:
**Samedi 1 – Fête de nos Sts Apôtres et premiers illuminateurs,
Thaddée et Barthélémy.**

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 24 Նոյեմբեր 2018

Ս. Գրիգոր եւ Նիկողայոս Սքանչելագործ Յայրապետներու եւ Միւռոն Եպիսկոպոսի Յիշատակութեան Օր

Ս. Գրիգոր Սքանչելագործը ծնած է
Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա
քաղաքին մէջ ազնուական
ընտանիքի մէջ, շուրջ 210

թուականին: Գրիգորը մտադիր էր
հմտանալ օրէնսգիտութեան եւ
հռետորութեան մէջ, սակայն

Աստուած անոր եւ իր եղբօրը համար այլ ճանապարհ նախասահմանած էր.
Անոնք կ'ուսանին Աթենքի մէջ, ապա Պաղեստինեան Կեսարիայի
մէջ՝ աշակերտելով այն ժամանակուան ամենահեղինակաւոր քրիստոնեայ
մտաւորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ ան կը
ձեռնադրուի քաղաքի Եպիսկոպոս: Աւանդութեան համաձայն՝ Ս. Գրիգորի
Եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նեոկեսարիայի մէջ հազիւ 17
քրիստոնեայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը 17 հեթանոս: Իր
անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացաւ
«Սքանչելագործ» մակդիրին: Ս. Գրիգոր աչալրջութեամբ կառավարեց թէ
իրեն վստահուած թեմն ու ժողովուրդը, թէ եղաւ մեծ մատենագիր՝ թողելով
բազմաթիւ աստուածաբանական երկեր:

Ան վախճանած է 270 թուականին խաղաղ մահուամբ:

Ս. Նիկողայոս Յայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառին Բաթարա
քաղաքին մէջ (Ներկայիս Անթալիայի մօտակայքը): Փոքր հասակէն կը
կորսցէ մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողները եւ կը մեծնայ իր մօրեղբօր՝
Նիկողայոս Երեց Եպիսկոպոսի խնամքին տակ: Աւետարանական պատգամը՝
<<Վաճառէ ունեցուածքդ եւ բաժնէ աղքատներուն>> (հմմտ. Մտթ. ԺԹ 21), իր
կեանքին նշանաբանը կը դարձնէ՝ խնամելով աղքատները, հիւանդները,
բանտարկեալները եւ որբերը: Ժողովուրդին կամքով կը դառնայ Չմիւռնիոյ
Եպիսկոպոսը: Յալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադիր
ամենուր Աւետարանը քարոզելէն: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս
կը վերադառնայ իր աթոռը, կը մասնակցի 325 թուականին Նիկիոյ
Տիեզերաժողովին: Մահացած է 326 թուականին: Ընդհանրական Եկեղեցւոյ
ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Սանդա Քլոզ անուամբ:



Ս. Միւռնն եպիսկոպոսը ծնած է մօտ 350 թուականին: Ան մեծ հրաշագործ էր՝ յայտնի իր ողորմութեամբ եւ բարեգործութեամբ: Զրիստոնեաներու հալածանքներուն ժամանակ, երբ Ս. Միւռնը Կրետի եպիսկոպոսն էր, կը քաջալերեր եւ կը խրախուսէր բոլորին՝ ինքը եւս անհամբեր սպասելով Նահատակութեան պսակը ստանալուն: Սակայն Աստուծոյ կամքով կը հասնի մինչեւ խոր ծերութիւն՝ 100 տարեկանին աւարտելով իր բարեպաշտ կեանքը:

Երկուշաբթի, Նոյեմբերի 26, 2018թ.

Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի Կոյսերու Յիշատակութեան Օր

Յուլիանէ եւ Վասիլուհի անունով շատ կոյսեր կան Տօնացոյցներուն մէջ: Բայց հայկական Տօնացոյցին մէջ յիշատակուողները Նիկոմիդիա քաղաքէն են:

Ս. Յուլիանէն (†304) մանուկ հասակէն ինքզինք նուիրած է կուսական կեանքին:

Դիոկղետիանոս կայսրի հալածանքներու

օրերուն կը մերժէ հեթանոս երիտասարդի մը ամուսնութեան առաջարկը եւ կը տարուի դատարան: Երբ բազմաթիւ չարչարանքներէն եւ

փորձութիւններէն յետոյ սուրբին կը հանեն այրելու, խարոյկը ինքն իրեն կը մարի: Այս առիթ կը դառնայ բազմաթիւ ներկաներու դարձին, որոնք տեղույն վրայ կը Նահատակուին: Իսկ Ս. Յուլիանէին կը գլխատեն, 19 տարեկանին:

Չայ Առաքելական Եկեղեցին Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերուն յիշատակը կը տօնէ Ա. Յիսնակի Կիրակիին յաջորդող Երկուշաբթի օրը:

Ս. Վասիլուհին եւս († 303), որ իննամեայ աղջնակ էր, Դիոկղետիանոս կայսրի հալածանքներու օրերուն կը մատնուի տանջանքներու, սակայն անվնաս դուրս կու գայ փորձութիւններէն^a առիթ դառնալով իր դատաւորին դարձին: Ան մահացած է 309 թուականին:



Holidays

Saturday, November 24, 2018

Commemoration of Sts. Gregory the Thaumaturge, Pontiff Nikoghayos and Bishop Muron

St. Gregory the Thaumaturge (Wonderworker) was born in the town Neocaesaria of Pontos (Sebastia), in the family of a nobleman, in about 210 AD. Gregory was going to study jurisprudence and rhetoric, but another way was predetermined by God for him and his brother. Gregory and his brother receive education in Athens and then in Palestinian Caesaria. Their teacher was Vorogines who was one of the most prominent Christian scientists of that time. Returning to Neocaesaria, he is ordained as the Bishop of the town. According to the tradition during the period of Gregory's ordination there were hardly 17 Christians in Neocaesaria, and when he passed away there were only 17 heathens. He has deserved the epithet "Thaumaturge" for the numerous miracles relating to his name and reputation. St. Gregory is also the author of many theological works. He passed away in 270 AD.

Pontiff Nikoghayos (Nicholas the Bishop) was born in the town Batara (presently nearby Antalia), in the province of Likia, in Asia Minor. His rich and pious parents pass away when he was a baby, and he is brought up and educated by his Uncle Bishop Nikoghayos Yerets. The evangelical commandment: "... sell all you have and give the money to the poor..." (The Gospel according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the sick, the prisoners and the orphans. By the will of the people he becomes the Bishop of Smyrna. During the period of Christians' persecutions, he is exiled, but however, continues to preach the Gospel everywhere. After the establishment of peace, he returns to his residence and participates in the Ecumenical Council of Nicaea in 325 Ad. He has passed away in 326 AD. He is one of the most beloved saints of the Universal Church and is more famous by the name Santa Claus.

Bishop Muron (Myron) was born in about 350 AD. He was a great wonder-worker and was familiar for his mercy and charity. During the period of Christians' persecutions, When St, Muron was the Bishop of Crete, he impatiently waiting for his martyrdom, supports and encourages everybody, By the will of God he lives up to old age and passes away at the age of 100.



Monday, November 26, 2018

Commemoration of Sts. Juliane and Vasilouhie

In Church calendars there are many virgins named Juliane and Vasilouhie. However, the virgins commemorated according to the Armenian Church Calendar, are from the town Nikomedia.


St. Juliane (Juliana) had made the vow of celibacy since childhood. During the period of Christians' persecutions by the King Dioklethianos she refuses to marry a young heathen man and because of it is taken to the court. When after many torments and trials the saint is taken to be burnt, the fire goes out. St. Juliane is beheaded at the age of 19, in 304 AD.

St. Vasilouhie (Basilla) was a nine-year-old girl. She is subjected to torments during the period of Christians' persecutions by the King Dioklethianos. However, she survives all torments and trials and remains unharmed, and the judge, witnessing this, is converted the Christianity. She passes away in 309 AD.



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 25 Նոյեմբեր 2018



**Տիկ. Սիլվա Պեքարեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իր սիրեցեալ եղբօր եւ եղբօր աղջկան՝**

**ՅԱԿՈՐ ՊԵՔԵՐԵԱՆԻ
(HAGOP BEKARIAN)**

**Մահուան 3-րդ տարելիցին առիթով
ԵՒ**

**ՆԱՅԻՐԻ ՄԱՐԻԱ ՊԵՔԵՐԵԱՆԻ
(NAYIRI MARIA BEKARIAN)**

Մահուան 3-րդ տարելիցին առիթով



Տիկ. Կարինե Տեր-Ստեփանեանի,
Տիկ. Մարինա Տեր-Ստեփանեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր`

**ՅԱՍՄԻԿ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
(HASMİK TER-STEPANIAN)**

Մահուան 26-րդ տարելիցին առիթով
ԵՐ

իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր`

**ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
(GEORGE TER-STEPANIAN)**

Մահուան 12-րդ տարելիցին առիթով



ՆՈՒՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

*Donations of November 2018
have been received with great appreciation*



CHURCH:

Mrs. Mary Karaoglanian \$120, Manoir Gouin Seniors \$111

“GOMIDAS” TBRATZ TAS 60th ANNIVERSARY:

Mr. Frank Altan \$1000, Mr. Steve Sermakesyan \$500

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE PAPEL ERDOGMUS:

Mr. & Mrs. Raffi Suvalian, Mr. & Mrs. Ari & Beatris Bagdasaryan, Mr. & Mrs. Raffi & Paula Ashkarian \$200, Mr. Andranik Sarkissian \$150, Mr. Jacques Boghgegian, Mr. & Mrs. Aram & Alis Terziyan, Mrs. Sonia Liberian, Mr. & Mrs. Hovig & Veronique Bedikian, Ms Salpy Markarian, Mr. & Mrs. Aren & Teni Makalian, Miss Armig Demirci, Dr. & Mrs. Armen & Ani Parunak, Mr. & Mrs. Raffi & Mary Terziyan, Mr. & Mrs. Agop Gurunlu, Mr. & Mrs. Antoine & Karen Kazarian, Mr. & Mrs. Pierre & Anais Ghannoum & Family, Dr. & Mrs. Tewfik & Sylva Said, Mr. Avo Sahagian, Mrs. Glenda Bernstein \$100, Mr. Ross Bagdasaryan \$75, Mr. & Mrs. Vatché & Houri Kassardjian, Mr. Harout Derashodian, Mrs. Alexandra Schor \$60, Mrs. Mary Theodore Dranias, Mrs. Nadia Apelyan,

Mr. & Mrs. Harry & Jacqueline Topikian, Mr. Varoujan Obarian, Mrs. Bessie Bobotsis, Mrs. Armi Macintyre, Mr. & Mrs. Martin & Sossi Marasliyan, Mr. & Mrs. Aris & Chris Pitsikoulis, Ms Tzovinar Chahinian, Mr. & Mrs. Nishan & Tzovik Makalian, Mr. Arto Dermovsesian \$50, Mr. & Mrs. Krikor Karaoglanian, Mr. Harout Torossian, Mrs. Nora Arabian, Mrs. Karnouhi Kaprielian \$30, Mr. & Mrs. Aret Sadvoryan, Mrs. Irma Basmajian \$25

HOKEHANKISD:

THE LATE AVEDIK & LAURA KULLUKIAN:

Mr. & Mrs. Vasken & Seta Kollokian \$200, Mr. & Mrs. Karekin Anasal \$150, Mr. & Mrs. Vicken Bakkalian, Mr. & Mrs. Hovhannes & Sonia Kalaydjian \$100, Mr. & Mrs. Sevan & Aida Kullukian \$50

THE LATE ALTAN FAMILY:

Mr. Frank Altan \$200

THE LATE TELMA ECITYAN ANTEPYAN:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan \$100



**Le mercredi 21 Novembre
par la bénédiction du Primat de l'église
Apostolique Arménienne du Canada Mgr.
Abgar Hovakimyan, le prêtre paroissial
Rev. P. David MARGARYAN a
participé Mercredi Rouge - Messe annuelle
à l'intention des chrétiens persécutés**

**Cathédrale Marie-Reine-du-Monde sous la
présidence de Mgr Christian Lépine.
Chaque année, un mercredi de novembre,
des lieux de cultes ou des édifices et
monuments importants du monde entier
sont illuminés de rouge pour signifier à la
population qu'encore aujourd'hui, plus de 200 millions de chrétiens sont
persécutés à cause de leur foi.**



**Cet événement s'inscrit dans le mouvement du # Mercredi Rouge initié par Aide à
l'Église en Détresse il y a quelques années.
Cette année Père David a été accompagné par le diacre Kami.**



**Wednesday, November 21 by the blessing of His
Grace Bishop Abgar Hovakimyan, Primate of the
Armenian Diocese of Canada, Rev. Fr. David
MARGARYAN, Parish Priest participated in Red
Wednesday - annual Mass offered for persecuted
Christians.**

**Cathedral Marie-Reine-du-Monde under the
presidency of Bishop Christian Lépine.
Every year on a Wednesday in November, places
of worship or important buildings and monuments
from around the world are lit up with red to signify
to the people that still today, more than 200 million
Christians are being persecuted for their faith.**

**This event is part of the # Red Wednesday movement initiated by Aid to the
Church in Need a few years ago.**

This year Father David attended accompanied by Deacon Kami.



Հ Ր Ա Է Ր

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Գնման, Օծման եւ անուանակոչութեան
48-րդ տարեդաձին ուրախ առիթով**



Արժանապատիւ Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան
եւ Մայր Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը

Միրով կը հրաւիրեն մեր հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակցելու հանդիսաւոր Սուրբ
Պատարագին, որ տեղի պիտի ունենայ

Կիրակի 9 Դեկտեմբեր 2018 ժամը 10:30-ին

Սուրբ Պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ

Գանատահայոց Թեմի Առաջնորդ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Սուրբ Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ

«ԿՈՄԻՏԱՍ» Դպրաց Դաս Երգչախումբը՝

Ղեկավարութեամբ Սարգիս Պարսեմեանի

Սուրբ Պատարագի ընթացքին կը կատարուին արեւշատութեան մատթանք՝

Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներու, անդամներու

եւ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն՝ Եկեղեցւոյս հանգուցեալ
հոգեւորականներու, բարերարներու, անդամներու, ինչպէս նաեւ Եկեղեցւոյս մէջ
իրենց ծառայութիւնը մատուցած հաւատացեալներու հոգիներուն ի հանգիստ:

Յետ արարողութեան «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի կ'ունենայ

ճաշկերոյթ պատրաստութեամբ՝

Մայր Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին, որուն պիտի յաջորդէ

գեղարուեստական յայտագիր:





INVITATION



À l'occasion du 48^e anniversaire
de la consécration et nomination
de la Cathédrale Arménienne
St. Grégoire l'Illuminateur de Montréal

Le Père David Margaryan
et le Conseil Paroissial de la Cathédrale
ont l'honneur de vous convier

dimanche 9 décembre 2018 à 10:30h

à la Sainte Messe solennelle qui sera célébrée

par Sa Grace l'Évêque

ABGAR HOVAKIMYAN

Primat Diocese Arménien du Canada

**Prière d'Action de Grâce pour les bienfaiteurs de la
Cathédrale Messe de Requiem pour le repos de l'âme des
disparus, serviteurs et bienfaiteurs de la Cathédrale**

La Messe sera interprétée par la chorale Gomidas

Sous la direction de Sarkis Barsemyan

**A l'issue de la Sainte Messe, une réception aura lieu
dans la salle Marie Manoogian organisée
par les Dames Auxiliares
de la Cathédrale, puis un programme musical.**





Website:
www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ

Կայքէջը - Website www.saintgregory.ca

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:



Chers Paroissiens,

Nous avons le plaisir de vous informer de la récente mise à jour de notre

Site: www.saintgregory.ca

Où vous trouvez les dernières nouvelles des activités et des événements.

Nous remercions de votre soutien!



Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca

where you will read the latest church news and events, meanwhile you can also make your online church donations and benefiting from other possibilities of our Website.

Thank you for your support!



Ուշադրութիւն Մեր Սիրելի Չաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council



ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Բարձր Հովանաւորութեամբ՝

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Նախաձեռնութեամբ՝

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ

Մասնակցութեամբ՝

«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբին

Ղեկավարութեամբ՝ **Սարգիս Պարսեմանի**

Չօնուած՝

Ի պատիւ եւ ի մեծարումն՝

«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի

60 - Ամեակին

Շաբաթ, 8 Դեկտեմբեր 2018, երեկ. ժամը 7-ին Եկեղեցւոյ մէջ
Յաւարտ հանդիսութեան հիւրասիրութիւն Եկեղեցւոյ «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ

Under the auspices of

Bishop Abgar Hovagimyan

Primate of the Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

In honor of the

«Gomidas» Choir's 60th Anniversary


A memorable evening of music, poetry
and a musical performance by the Gomidas Choir

Directed by: **Sarkis Barsemian**

December 8, 2018 at 7:00 pm in the Cathedral

Coffee reception following the event in the «Vatche Hovsepien» hall

Մուտքի Նուէր / Donation \$10

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 • Tel.: 514 279-3066 • Fax: 514 279-8008
stgregorychurch@gmail.com  Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

48^{-րդ}



ՏԱՐԵՂԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագիչ՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական

Յայտագիր «Մարի Մանուկեան» սրահին մէջ

Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 4 Դեկտեմբեր 2018





Նախաձեռնություններ՝
 Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ
 Լավալի Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցույ
 Թերէեան Մշակութային Միութեան



In collaboration with
 St. Gregory the Illuminator Armenian Cathedral
 Holy Cross Armenian Church
 Tekeyan Cultural Association

NEW YEAR'S EVE EXTRAVAGANZA

2019

Featuring Nerses Adourian
 & 5 member band
 DJ Hovsep



December 31, 2018

8:00 pm at Centre Arménie

1025 Boulevard Élisabeth, Laval, QC H7W 3J7

Eight course appetizers and full course meal
 Champagne toast and party favors

Entrance gifts
 Kids entertainment and Santa

Adults - \$95 (after December 1 \$110)

Children - (age 7-14) \$45

Children ages 6 and under - free

For reservations, please contact:

St Gregory the Illuminator (514) 279 3066

Tekeyan Cultural Association (514) 747 6680

Holy Cross Church (450) 687 5355

Centre Arménie (438) 826 2364



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի
կ'ունենան

Կիրակի օրերը կեսօրէ ետք, ժամը 1-ին:

**Les pratiques de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:00 heures**

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.**

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



**Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-14 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



*In a pleasant and friendly atmosphere, the
children will learn:*

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

*Sunday School Every Sunday
at 11:00 am*

*For more information and registration call to the
Church office
(514) 279-3066*

Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

***BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS***

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենայ ամեն Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7-ԷՆ սկսեալ Եկեղեցւոյ մէջ:**

**Every Thursday Starting at 7:00 pm
in the Church.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական
Նիւթերուն:**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be served
during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:**

**Cordially we expect everyone's
presence.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիսական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

Երեկոյեան ժամը 5-5:30, կ'ես ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ճիսական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիսական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**